

*ՀՀ վճռաքել դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
ՀՈՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ*

ՊԱՏԻԺ ԵՐԱՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՉՔՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՐԳԱՐՈՒԹՅԱՆ ՄԿՉՔՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման վճռական պահն է: Դատարանի կողմից ընտրվող պատժի տեսակը և չափը պետք է դառնա կատարված հանցագործության հասարակական վտանգավորության լիարժեք չափանիշ, պատժի ենթարկվող անձին ուղղելու ամենակարճ ճանապարհ, ինչպես դատապարտյալի, այնպես էլ այլ անձանց կողմից նոր հանցագործությունները կանխելու գործուն միջոց: Պատիժը հանցագործության անխուսափելի հետևանքն է և պայմանավորված է նրա գոյությամբ: Այս մասին դիպուկ է արտահայտվել Չ. Լոմբրոզոն. «Կա հանցագործություն՝ կա պատիժ, չկա հանցագործություն՝ չկա պատիժ»:

Պատիժը լայն առումով՝ որպես հարկադրանք, ծագել և զարգացել է հասարակության հետ միաժամանակ: Հասարակությունն առանց պատժի երբեք գոյություն չի ունեցել. «Եվ մինչ մարդու մեջ փայլեց բանականության առաջին կայծը՝ ինչու և ինչի համար գոյություն ունի պատիժը, այն արդեն իսկ վաղուց գոյություն ուներ և գործում էր»: Իսկ պատժի՝ որպես սոցիալ-իրավական ինստիտուտի ծագումը պայմանավորված է առաջին քաղաքակրթությունների և պետական կազմավորումների ծագմամբ՝ մ.թ.ա. IV-III հազարամյակներում:

Վերոգրյալից հետևում է, որ կատարված հանցագործության համար արդարացի և համարժեք պատժի նշանակման, հանցավորության կանխարգելման հա-

մար դրա արդյունավետության խնդիրը մարդկության պատմության ամենանագույն հիմնախնդիրներից է: Հայտնի է, որ քաղաքակրթության վաղ շրջանում պատիժը կրել է կատարած արարքի համար վրեժխնդրության բնույթ («ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»): Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց փոխվել են պատժի էության և նպատակների մասին պատկերացումները, հաստատվել է հանցագործներին ուղղելու և հանցագործությունները կանխարգելելու խնդրում պատժի ուղղվածությունը:

Պատիժն անմիջականորեն ներգործում է ոչ թե արտաքին օբյեկտիվ պայմանների վրա, որոնք նպաստում են հանցավորության աճին, այլ մարդկանց հոգեբանության վրա. այն նպաստում է մարդկանց իրավաչափ վարքագծի դրսևորմանը՝ զսպելով նրանց կողմից հանցագործությունների կատարումը: Եվ քանի որ կոնկրետ պատիժը միշտ ուղղված է կոնկրետ հանցագործի նկատմամբ, այն պետք է անհատականացվի՝ հաշվի առնելով տվյալ գործին և հանցագործի անձին առնչվող բոլոր հանգամանքները²:

Արդարացի պատիժ նշանակելու համար կարևոր նախապայման է հանցագործությունների որակումը, որը սպառնիչ պատկերացում է տալիս տվյալ տեսակի հանցագործության բնույթի և հասարակական վտանգավորության աստիճանի մասին, միաժամանակ որոշում է այն սահմանները, որոնց շրջանակում կոնկրետ հանցագործության համար դատարանի կողմից կնշանակվի այնպիսի պա-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն



տիժ, որն ամբողջությամբ կհամապատասխանի պատժի անհատականացման սկզբունքին³:

Քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը հանդիսանում է քրեաիրավական հիմնարար սկզբունքներից մեկն, որը հիմնված է պատժի նպատակների վրա: Չեն կարող լինել բացարձակապես կրկնվող հանցագործություններ և հանցագործներ: Լայն իմաստով անհատականացման սկզբունքը տարածվում է իրավակիրառ գործունեության մի շարք փուլերի՝ պատժի նշանակման, կատարման, պատժի կրումից լրիվ կամ մասնակի ազատման վրա:

Ինչպես նշում է Ա. Գորելիկը, բեն «անհատականացում» բառի արմատն «անհատն» է, այն չի կարող հանգեցվել միայն հանցագործի անձը հաշվի առնելուն և իր մեջ ներառում է արարքի հատկանիշները հաշվի առնելը, քանի որ արարքի մեջ պարտադիր կերպով արտահայտվում են այն կատարող անձի առանձնահատկությունները: Միաժամանակ, պատժի անհատականացումը նշանակում է որոշակի անձի նկատմամբ պատժաչափի ընտրման գործընթաց⁴:

Պատժի անհատականացման սկզբունքի էությունը, մեր կարծիքով, բավականին սեղմ և դիպուկ է արտահայտվել նաև Կ. Մարքսի կողմից. «*Եթե հանցագործության հասկացությունը ենթադրում է պարիժ, ապա իրական հանցագործությունը ենթադրում է պարժի որոշակի չափ*»⁵:

Հանցագործություն կատարած անձի նկատմամբ սանկցիայի շրջանակում կոնկրետ պատժաչափի սահմանումը դատարանի համար բավականին կարևոր և պատասխանատու խնդիր է: Պատիժ սահմանելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնի հանցագործության բնույթը և ծանրության աստիճանը, հանցագործի անձը, անձի պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված):

Որոշելով կատարված հանցագործության բնույթը և ծանրության աստիճանը՝ դատարանը հաշվի է առնում այն, թե ինչ եղանակով է կատարվել հանցագործությունը, ինչ աստիճանի է այն զարգացել և հանցավոր մտադրության իրականացման ո՞ր փուլում է ընդհատվել (հանցագործության նախապատրաստության, հանցավորձի՞, թե՞ ավարտված հանցագործության), հաշվի է առնվում անձի սուբյեկտիվ վերաբերմունքը կատարված արարքին և դրա հանրորեն վտանգավոր հետևանքներին, այսինքն մեղքի ձևը, հանցագործության շարժառիթները և նպատակը: Անձի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում վերը թվարկված հանգամանքների ինչպես իրավաբանական, այնպես էլ հոգեբանական բովանդակությունը⁶: Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու պատժի նշանակման հետևյալ ընդհանուր սկզբունքային պահանջները. ա) պատժի նշանակումը հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների հաշվառմամբ, բ) կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատում, գ) հանցավորի անձը բնութագրող տվյալների հաշվառում, դ) պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների գնահատում: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 70-րդ հոդվածը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անգոյշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հան-

գամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերացողիակա-նացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ: Կարծում ենք, որ Նախագծով առավել հստակեցվել է դատարանի կողմից պատիժ սահմանելիս պատժի տեսակի և չափի որոշման ընթացքում հաշվի առնվող հանգամանքները, ուստի այն առավել ընդունելի է:

Վերը նշվածի առնչությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 13-ին Սեյրան Ադախանյանի գործով կայացրած որոշմամբ, դիրքորոշում էր արտահայտել առ այն, որ հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա գրադեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները: Այսպիսով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել էր, որ հանցանք կատարած անձի կյանքի և անձնական առանձնահատկությունները վեր հանելու (ընտանեկան դրություն, տարիք, առողջական վիճակ և այլն), ինչպես նաև նախկինում դրսևորած վարքագիծը բազմակողմանի գնահատման ենթարկելու կարևորությունը, որոնք կարող են վերջինիս բնութագրել ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով:

Այսինքն՝ պետության պատժողական քաղաքականության սկզբունքները պետք է ածանցվեն արարքների հանրության համար վտանգավորության, ծանրության աստիճանից, պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից, հանցագործների անձի բնութագրություններից և, ինչու չէ, այդ արարքների տարածվածու-

թյունից ու կոնկրետ հանցատեսակների միտումներից⁸: Յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է համապատասխանեցնի պատժի խստությունը կատարված արարքի ծանրության հետ՝ հաշվի առնելով այն կատարած անձի առանձնահատկությունները⁹:

Միաժամանակ, պատիժ նշանակելու գործընթացը դատաբանության կարևորագույն փուլերից է, որում տեսանելի է դառնում արդարադատության իրակա-նացումը, և դրա վերաբերյալ ձևավորում որոշակի պատկերացում հասարակու-թյան շրջանում: Հետևաբար, դատարան-ները պետք է պատշաճ ջանասիրություն և ուշադրություն ցուցաբերեն՝ հատկապես ապահովելով արդարության սկզբունքի հետևողական կենսագործումը: Միայն հանցանքի ծանրությանն ու հանցավորի անձին համարժեք պատժի նշանակումն է ընդունակ վերականգնել հանցագործության արդյունքում խախտված սոցիալա-կան արդարությունը, ապահովել պատժի մյուս նպատակների իրավացիությունը, ձևավորել վստահություն դատարանների գործունեության և արդարադատության նկատմամբ¹⁰:

Սոցիալական արդարությունը «արդարություն» կատեգորիայի մակարդակներից մեկն է¹¹, և դրա վերականգնում հնարավոր է, եթե դատարանը, հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակի արդարա-ցի պատիժ: ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է այն հիմնական կանոն-ները, որոնք դատարանը պարտավոր է հաշվի առնել յուրաքանչյուր գործով: Դրանք պատիժ նշանակելու հիմնարար սկզբունքներն են՝ ղեկավար դրույթներ, որոնցով դատարանն առաջնորդվում է պատիժ նշանակելու բարդ և պատասխա-նատու գործընթացում: Նշված սկզբունք-ներն ուրվագծում են դատարանի հայե-ցողության շրջանակները և կոչված են հնարավորինս բացառելու պատիժ



նշանակելիս կամայականությունների դրսևորման հնարավորությունը: Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները բխում են քրեական օրենսդրության հիմնական սկզբունքներից և ապահովում են պատժը՝ ա) օրինականությունը, բ) արդարությունը, գ) անհատականացումը, դ) մարդասիրությունը¹²:

Այժմ դիտարկենք պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն արդարության սկզբունքի իրագործման համատեքստում: Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները կոնկրետ ձևակերպում են ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում, որի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ (...) 2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Ինչպես տեսնում ենք, օրենքի առաջնային պահանջը պատժի արդարացիությունն է, որը, որպես քրեական իրավունքի սկզբունք, ձևակերպված է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում, համաձայն որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պետք է լինի արդարացի, անհրաժեշտ և բավարար նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Արդարության սկզբունքը պատիժ նշանակելիս դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի առաջին մասն ուղղակիորեն պահանջում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվի արդարացի պատիժ: Չնայած օրենքը չի բացահայտում արդարացի պատժի էությունը, սակայն պատժի նշանակումը կարգավորող մյուս դրույթները ծառայում են այդ գաղափարին:

Արդարությունը, որպես կոնկրետ

պատմական բնութագիր ունեցող արժեք, գաղափար, էտալոն, ձևավորվել է հասարակության զարգացմանը համընթաց և իր արտացոլումն է գտել նաև քրեաիրավական հարաբերություններում: Քրեական իրավունքում պատժի արդարությունն առաջին հերթին դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական արձագանք տալու պարտադիրությամբ, սպա՝ հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափությամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը. այս կանոնի խախտում է հանցանք կատարած անձի նկատմամբ ինչպես չափազանց մեղմ, այնպես էլ խիստ պատժի նշանակումը:

Արդարության սկզբունքը քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկն է, որը որպես ղեկավար, ելակետային դրույթ ընկած է ամբողջ քրեական իրավունքի հիմքում: Արդարացի պատժի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում ընդգծել է, որ պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար¹³: ՀՀ վճռաբեկ դատարանը տարիների ընթացքում ձևավորած իր նախադեպային իրավունքի շրջանակում կայուն դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատիժն արդարացի է, եթե գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի (կատարման եղանակ, տեղ, ժամանակ, իրադրություն, գործիքներ և միջոցներ, նպատակ, շարժառիթներ, մեղքի ձև և տեսակ և այլն), մեղմացնող և ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև անձը

բնութագրող տվյալների համակողմանի և ամբողջական վերլուծության արդյունք է:

Այսպիսով, դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատիժ նշանակելիս պարտավոր է ղեկավարվել այնպիսի հիմնադրույթներով, որոնք թույլ են տալիս հանցանք կատարած անձանց նկատմամբ նշանակել արդարացի պատիժ: Այս համատեքստում հարկ է նշել, որ առանձնակի բարդություն է ներկայացնում դատարանի կողմից անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու գործընթացը:

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս ամենաբարդ և պատասխանատու որոշումներից մեկն անչափահասի կողմից կատարված հանցագործությանն արձագանքելու արդյունավետ միջոցի ընտրությունն է, քանի որ մի կողմից առկա է հանցանք կատարած անչափահաս, ում վարքագիծը մեծապես պայմանավորված է եղել տարիքային առանձնահատկություններից բխող իրողությամբ, և առկա է մտահոգություն, որ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը կարող է անդառնալիորեն և բացասաբար անդրադառնալ նրա հետագա կյանքի վրա, մյուս կողմից՝ կատարված հանցագործությամբ խախտվել են այլ անձի իրավունքները և դրան չարձագանքելն անչափահասի մոտ կարող է ձևավորել անպատժելիության գոյացում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ուստի, իրավասու մարմնի առաջնային խնդիրը պետք է լինի կատարված արարքին տալ համաչափ պատասխան, ընտրել պատժի կամ քրեաիրավական ներգործության այնպիսի տեսակ, որը հանցանք կատարած անչափահասի համար կլինի իմաստավորված, կապահովի հասարակությունում նրա վերախնդրումը, վերաստցիալականացումը և նոր հանցագործությունների կանխարգելումը:

Նշված խնդրի լուծման համար առանցքային կարևորություն ունեն այն սկզբունքները և մոտեցումները, որոնք

պետք է կիրառվեն անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս: Դատարանները, պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելիս, ղեկավարվում են երկու սկզբունքով՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներ, որոնք հավասարապես կիրառելի են թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ, և անչափահասների նկատմամբ կիրառվող առանձնահատուկ սկզբունքներ, որոնց ձևավորումը պայմանավորված է անչափահասների տարիքային, սոցիալական, ֆիզիոլոգիական ու հոգեբանական առանձնահատկություններով:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող սպառնալ պատժի նպատակները: Վերը նշված ձևակերպումը «քրեական ռեպրեսիայի տնտեսման» սկզբունքի դրսևորում է, որի էությունն է, որ դատարանը պետք է միշտ նախապատվություն տա առավել մեղմ պատժատեսակին, եթե այն բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու, անձի հետագա հանցավոր վարքագիծը կանխելու, նրա վերասոցիալականացման համար: Այս սկզբունքն առանձին կարևորություն ունի անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս:

Վերլուծելով քննարկվող նորմի և դրա կիրառումը անչափահասների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն Ա. Նունուշյանի գործով որոշմամբ նշել է, որ բոլոր այն դեպքերում, երբ անչափահասին մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսվում է միայն ազատազրկում պատժատեսակը, դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ավելի մեղմ պատժամիջոց ընտրելու կամ ավելի ցածր պատժաչափ նշանակելու հնարավորությունը՝ հաշվի առնե-



լով առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը, անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, նրա վրա այլոց ազդեցությունը, անձը բնութագրող այլ տվյալները, ինչպես նաև հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը¹⁴:

Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից գատ՝ անչափահասների նկատմամբ կիրառվում են առանձնահատուկ սկզբունքներ և մոտեցումներ: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008) 11 հանձնարարականում սահմանված՝ «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» 2-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ անչափահասների նկատմամբ պատիժներ կամ նրանց հանցավոր վարքագծին արձագանքելու այլ եղանակներ նշանակելիս, առաջնահերթություն պետք է տրվի դաստիարակչական բնույթի, կանխարգելիչ և վերականգնողական միջոցներին: Օրինակ, եթե հնարավոր է պատժի նպատակներին հասնել անչափահասի նկատմամբ ոչ թե պատիժ, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով, ապա պետք է ընտրվի այդ տարբերակը¹⁵: Նույն փաստաթղթում նշված են նաև «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված սկզբունքները՝ ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցները որպես ծայրահեղ միջոց դիտարկելը և դրանց այլընտրանք հանդիսացող միջոցների լայն կիրառությունը¹⁶: Այս սկզբունքների խախտման անթույլատրելիությունը նշել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Տ-ն և Վ-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործերով¹⁷:

Պեկինյան կանոնների 17.1-րդ կետում առավել մանրամասն սահմանված են երեխայի նկատմամբ պատիժ կամ

քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելու սկզբունքները, դրանք են՝ ա) ներգործության միջոցները պետք է միշտ համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և կարիքներին, ինչպես նաև հասարակության պահանջներին, բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրագին քննարկումից հետո, և սահմանափակումը պետք է հասցնել հնարավոր նվազագույնի, գ) անչափահաս իրավախախտին պետք չէ զրկել ազատությունից, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ, և եթե առկա չէ արձագանքման այլ համապատասխան միջոց¹⁸:

Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հստակապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտի առանձնահատկություններին, թե՛ իրավախախտման հանգամանքներին¹⁹: Ներկայացված դրույթից հետևում է, որ անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է ապահովվի «Համաչափության սկզբունքը», ինչը ենթադրում է կատարվածին՝ իրավախախտման ծանրությանը, բնույթին, հանցանք կատարած անձի առանձնահատկություններին (առողջական, սոցիալական վիճակին, մտավոր զարգացման, հասունության աստիճանին, ընտանեկան հանգամանքներին, կյանքի պայմաններին և այլն), հանցագործությունից հետո դրսևորած վարքագծին (օրինակ՝ պատճառված վնասը հարթելը կամ հատուցելը) համաչափ արձագանքի երաշխավորում:

Վերը նշված դրույթն իր ամրագրում է գտել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ

հողվածի 1-ին մասում, համաձայն որի՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դատախարարության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց վրա այլ անձանց ազդեցությունը: ՀՀ քրեական օրենսգրքի այս դրույթից հետևում է, որ դատարանները, անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս, պետք է ուշադրություն դարձնեն՝ ա) անչափահասի կյանքի և դատախարարության պայմաններին՝ որոշելու, թե որքանով են այդ պայմանները դերակատարություն ունեցել անչափահասի հանցավոր վարքագծի ձևավորման առումով, բ) հոգեկանի զարգացման աստիճանին, ինչը ենթադրում է անձի մտավոր, կամային և հուզական ոլորտների զնահատում, գ) առողջական վիճակին (ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեկան), քանի որ հանցավոր վարքագծի դրսևորումը կարող է պայմանավորված լինել ինչպես անձի ֆիզիկական արատներով, քրոնիկ հիվանդություններով պայմանավորված հոգեկան վիճակով, այնպես էլ տարաբնույթ հոգեկան

խանգարումներով, որոնք ոչ միշտ են հանգեցնում անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության, դ) անձի այլ առանձնահատկություններին (օրինակ՝ անձի վարքագծին, արժեքային համակարգին, սոցիալական կարգավիճակին և այլն), ե) անչափահասի վրա այլ անձանց ազդեցությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հասարակության զարգացման ներկա փուլում քրեական պատիժը հանդիսանում է այն անհրաժեշտ և միևնույն ժամանակ արդյունավետ միջոցը, որով պետությունն արձագանքում է կատարված հանցագործությանը: Այդ իսկ պատճառով պատժի ինստիտուտը, ինչպես նաև դրա նշանակման սկզբունքները, մշտապես կարիք ունեն մանրակրկիտ օրենսդրական կանոնակարգման, ինչպես նաև գիտական հիմնավորումների, որպեսզի քրեախրավական ներգործության միջոցները կիրառվեն միայն այն սահմաններում, որոնք անհրաժեշտ և բավարար են պատժի առջև դրված խնդիրների և նպատակների իրագործմանը հասնելու համար:

¹ Տե՛ս Шервуд Е.А., Законы лангобардов, Обычное право древнегерманского племени: К раннему этногенезу италийцев, М., Наука, 1992, էջ 55:
² Տե՛ս Թաղևոսյան Լ. Չ., Չավարտված հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը, «Ֆենոմեն» հրատ., Երևան, 2007, էջ 239:
³ Տե՛ս Велиев С.А., Принципы назначения наказания, Санкт-Петербург, «Юридический центр Пресс», 2004, էջ 153:
⁴ Տե՛ս Горелик А.С., Назначение наказания по совокупности преступлений и приговоров, Красноярск, 1991, էջ 22:
⁵ Տե՛ս Марк К.Г., Энгельс Ф.Ф., Сочинения, Том 1, էջ 124:
⁶ Տե՛ս Թաղևոսյան Լ. Չ., Չավարտված հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը, «Ֆենոմեն» հրատ., Երևան, 2007, էջ 240:
⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Սեյրան

Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ-0082/01/12 որոշումը:
⁸ Տե՛ս Ջհանգիրյան Գ. Վ., Մեղադրանքի պաշտպանության և պատժողական քաղաքականության ուղենիշներն ու սկզբունքները, «Օրինականություն», 2007, № 40, էջ 5:
⁹ Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступления и наказания, «Пенатес-пенатль», Москва, 2000, էջ 298-399:
¹⁰ Տե՛ս Аветисян С.С., «Проблемы совершенствования принципов уголовного права в контексте нового уголовного кодекса Республики Армения», «Դատական իշխանություն», Եր., 2014, 1-2/175-176, հունվար-փետրվար, էջեր 7-15:
¹¹ Տե՛ս Велиев С.А., «Принципы назначения наказания», Санкт-Петербург, 2004, էջ 304:
¹² Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 427:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ
 Իշխանություն



Քրեական իրավունք

- ¹³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հարությունյանի գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-201/07 որոշումը:
- ¹⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արամայիս Նունուշյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԳ/0094/01/13 որոշումը:
- ¹⁵ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008) 11 հանձնարարականի «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» 2-րդ կետը:
- ¹⁶ Տե՛ս նույն տեղում:
- ¹⁷ Տե՛ս *T. v. the United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝

1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 24724/94, և *V. v. the United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 24888/94:

- ¹⁸ Տե՛ս Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), կանոն 17.1:
- ¹⁹ Տե՛ս Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), կանոն 5.1:

RESUME - РЕЗЮМЕ

GENERAL PRINCIPLES OF SENTENCING IN THE CONTEXT OF THE IMPLEMENTATION OF THE PRINCIPLE OF FAIRNESS

Emilya Abrahamyan

*Assistant to the Chairman of the Criminal chamber of the RA Cassation court,
PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law
of RAU Institute of Law and Politics*

This article examines the institute of criminal punishment from the point of view of the implementation of the principle of fairness in the judgement. The article discloses and analyses in detail the conditions, under which the punishment is recognized as complying with the principle of fairness. In particular, punishment is considered fair if it is appropriate to the degree and nature of public danger, to the circumstances of committing crime, to the personality of the perpetrator and it is necessary to take into account the circumstances mitigating and aggravating the punishment. Each of the conditions of fair punishment is given a characteristic, with examples from judicial practice.

In our opinion, the principle of fairness as one of the core principles of criminal law plays a coordinating role in the system of principles of criminal law. Through it principles of criminal law form a certain system of the lawful functioning of the norms of law that meets the interests of all subjects of law. In the criminal law, the principle of fairness most clearly appears during the sentencing and is expressed in the principle of individualization of the punishment.

Keywords: *punishment, purpose of punishment, principles, fairness, legality, humanity, responsibility, judgement, personality of the perpetrator, degree and nature of public danger.*

ОБЩИЕ НАЧАЛА НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА СПРАВЕДЛИВОСТИ

Эмиля Абраамян

Помощник Председателя Уголовной палаты Кассационного суда РА, соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ

В статье исследуется институт назначения уголовного наказания с точки зрения реализации в судебном приговоре принципа справедливости. Подробно раскрываются и анализируются условия, при соблюдении которых наказание признается соответствующим принципу справедливости. В частности, справедливым считается наказание, если оно соответствует степени и характеру общественной опасности, обстоятельствам совершения преступления, личности виновного, а также необходимо учитывать обстоятельства, смягчающие и отягчающие наказание. Каждому из условий справедливого наказания дана характеристика, с приведением примеров из судебной практики.

На наш взгляд, принципу справедливости как одному из стержневых принципов уголовного права принадлежит координирующая роль в системе принципов уголовного права. Именно благодаря ему принципы уголовного права образуют определенную систему правомерного функционирования норм закона, отвечающего интересам всех субъектов права. В уголовном праве принцип справедливости наиболее ярко проявляется при назначении наказания и находит свое выражение в принципе индивидуализации назначения наказания.

Ключевые слова: *наказание, назначение наказания, принципы, справедливость, законность, гуманизм, ответственность, приговор, личность виновного, степень и характер общественной опасности.*

Բանալի բառեր - *պարիժ, պարիժի նշանակում, սկզբունքներ, արդարություն, օրինականություն, մարդասիրություն, պարասիականություն, դատավճիռ, հանցավորի անձ, հանրային վրանգավորության աստիճանի և բնույթ:*